



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՈՐՈՇՈՒՄ**

օգոստոսի 2017 թվականի N°Ա
քաղ. Երևան

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՓՈՂՈՑԻ 178/2 ՀԱՍՑԵԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ
ՄՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով՝

ա) Երևան քաղաքի Անտառային 178/2 հասցեի բազմաբնակարան շենքի (այսուհետ՝ Բազմաբնակարան շենք) բնակիչների կողմից լիազորված անձ Հմայակ Աբգարյանի (այսուհետ Լիազորված անձ) 2017 թվականի հունիսի 21-ի Բազմաբնակարան շենքի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման վերաբերյալ դիմումը,

բ) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2017 թվականի հուլիսի 28-ի N°04-ՂԳ-1039 գրությունը Բազմաբնակարան շենքի միացումը Լիազորված անձի դիմումի հիման վրա իրականացնելու առնչությամբ առարկություն չունենալու վերաբերյալ,

և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի «Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնները սահմանելու մասին» N°358Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների 13.8 կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ՝

1) Բազմաբնակարան շենքի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման համար դիմում ներկայացնում, կառուցվող բազմաբնակարան շենքի կամ կառուցապատվող թաղամասի սպառման համակարգն էլեկտրական

ցանցին միացման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր) կնքում և միացման վճարներ վճարում է Լիազորված անձը.

- 2) Բազմաբնակարան շենքի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման վճարը հաշվարկվում է համաձայն Հանձնաժողովի 2007 թվականի դեկտեմբերի 21-ի №659Ն որոշմամբ հաստատված հավելվածի 2-րդ՝ «Բազմաբնակարան շենքերի միացման համար կառուցապատողներից գանձվող միացման վճարները» գլխով սահմանված կարգի.
- 3) Էլեկտրական ցանցին միացման դիմում ներկայացնելու օրվանից մինչև Պայմանագիր կնքելու առաջարկություն ներկայացնելու և միացման վճարի վճարման օրվանից մինչև Բազմաբնակարան շենքի սպառման համակարգը փաստացի էլեկտրամատակարարմամբ ապահովելու առավելագույն ժամկետները սահմանվում են Հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշմամբ հաստատված էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների համապատասխանաբար 13.3 և 13.5 կետերի համաձայն:

2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
օգոստոս 2017թ.
Ժամը 16⁰⁰